

ՊԱՐՍԻՑ ԲԱՆԱՍՏԵՂԾ ԽԱՂԱՆԻՆ
« ՀԱՅԿԱԿԱՆ » ՇԱՐՔԸ

Բառնապյան Ջ. Ա.

Բյուրավոր պոետներ են ապրել այս հողագնդի վրա, սակայն հավիտենական փառքի արժանացածները ընտրյալներն են միայն: Ժամանակն անողորք է միջակությունների հանդեպ, սակայն շռայլորեն կարող է հավիտենական փառք ապահովել նրանց համար, ովքեր երգել են հավերժ մարդկային զգացմունքների, համամարդկային տագնապների ու հույզերի մասին՝ գոյության անվերժանելի գաղտնիքի մեջ խորանալու ցանկությամբ: Այն պոետներն են իրենց տեղն ապահովել անմահների շարքում, ում պոեզիան արտահայտել է հավերժ մարդկային կատեգորիաներ՝ սիրո, գեղեցկության ու ներդաշնակության պաշտամունք, կենսասիրություն, տիեզերքի, բնության փառաբանություն, կյանքի ու մահվան մասին խորհրդածություն: Բարու, գեղեցիկի հանդեպ քնքուշ խանդաղատանք և բռնության, պատերազմների հանդեպ նողկանք, ժխտողական վերաբերմունք դաստիարակող գրական գոհարների վրա են խարսխվում ազգային ու համամարդկային արժեքները: Պարսից իմաստուն ժողովուրդը, որի արմատները հասնում են մարդկային քաղաքակրթության ակունքներին, հավերժ մարդկային արժեքները փառաբանող իր բազում պոետներից հատուկ մեծարանքի է արժանացրել յոթին :

Գերմանացի մեծ գրող Գյոթեն, երկար ժամանակ ուսումնասիրելով Արևելքի և մասնավորապես պարսից պոեզիան, այսպիսի միտք է արտահայտել. «Ասում են, թե պարսիկները ամբողջ հինգ դարերի իրենց բոլոր պոետներից միայն հինգ հոգու են համարել իսկական բանաստեղծ, որոնք արժանի են սերնդեսերունդ հիշվելու: Բայց չէ՞ որ «խտանված» և այդ 7 մեծերի մեջ չհիշատակվող բանաստեղծներից շատերը բարձր են ինձանից՝ իբրև պոետ»:

Այդ 7 մեծերից մեկն էլ 12-րդ դարի բանաստեղծ ԽԱՂԱՆԻՆ է, որի բանաստեղծություններին մեր փոքրիկ զեկուցման շրջանակներում անդրադարձել ենք այն նկատառումով, որ նա մի գեղեցիկ շարք է նվիրել մեզ՝ հայերիս:

12-րդ դարը Վերածննդի ժամանակաշրջան էր լայնատարած Պարսից պետության տիրապետության տակ գտնվող և ինքնիշխանության ձգտող Շիրվանի համար: Չեռք բերելով ցանկալի անկախությունը՝ այստեղ աննախադեպ ծաղկում են ապրում արվեստներն ու արհեստները: Ծաղկում է ապրում նաև գրականությունը: Շիրվանշահի պալատում առանձնահատուկ կարգավիճակ ունեին բանաստեղծները, որոնք իրենց ժամանակի ամենազարգացած, կիրթ մտավորականներն էին, որ աչքի էին ընկնում լեզուների իմացությամբ, այլ ժողովուրդների գրականության ճանաչողությամբ: Սակայն շիրվանշահերի համար, ինչպես աշխարհի բոլոր արքաների համար ամենանախընտրելին ներքողի ժանրն է, ուր ճռռմաբան հանգերով բանաստեղծները փառաբանում էին հաճախ սպաշնորհ, իրենց զիտելիքներով աչքի չընկնող տիրակալներին: Ահա այդ պայմաններում էր, որ պալատական միջավայրում գարնանային թարմ զեփյուռի շունչ բերեց 25-ամյա շնորհաշատ բանաստեղծ Խաղանին:

Հայտնի է, որ 1120 թվականին Շամախի քաղաքում ծնված Խաղանիի հայրը մահմեդական էր, իսկ մայրը՝ քրիստոնեուհի, հավանաբար, հայուհի...

Վաղ է որբացել Խաղանին, սակայն նրա հորեղբայրը հոգացել է տղային պատշաճ կրթություն և դաստիարակություն ապահովելու գործը: Բնատուր շնորհքը պարարտ հող է գտել զարգանալու, որի արդյունքում 25 տարեկան երիտասարդ բանաստեղծն արդեն ճանաչված էր ու սիրված: Միտք քնարը նրա դեմ բացում է ժամանակակիցների սրտերը, նաև արքայական պալատի դռները: Հուզական, մեղեդային տողերը հռչակավոր դարձրին Խաղանին: Ամենուրեք նույնն է սիրո լեզուն: Միրած էակին փառաբանող, անջատումից թախիժ ու տխրություն ապրող և սրտում նոր հանդիպման հույսեր փայփայող երիտասարդները աշխարհի բոլոր լեզուներով նույն կերպ են արտահայտում իրենց զգացմունքները: Իսկ ահա թե ինչ էր ասում իր սիրած էակին Խաղանին.

Աստվածային գեղեցկության գիշեր վարսեր ունես դու,
Անէության ձգտող ձեռքի հրաբորբ սեր ունես դու.
Գարնան նման գեղեցիկ են քո վարսերը հոտավետ,
Լիալուսնի ու արևի պայծառ լույսեր ունես դու:

Մեր, կարոտ, բաժանում... Հավերժ արդիական թեմա սիրերգության մեջ.

Բամբասանքից խռովեցինք ես ու դու,
Առանց կռվի բաժանվեցինք ես ու դու.
Հանդիպելիս չենք խոսում մենք իրար հետ,
Ի՞նչ գաղտնիք կա, չհայտնեցինք ես ու դու:

Արևելքի մարդուն բնորոշ է դեռ երիտասարդ տարիքում կյանքի անցողիկության մասին խորհրդածելու հակումը, կյանքի իմաստի, լինելության գաղտնիքի փնտրտուքը: Իսկ բանաստեղծը ժամանակի սրբընթաց հոսքի մեջ կատարելության ու ներդաշնակության ակնթարթներ է որսում՝ ծնունդ տալով այսպիսի տողերի.

Գարնան քամին երբ հառաչեց... Դ-ա սերն է,
Սոխակն եկավ, թաքուն լացեց... Դ-ա սերն է,
Անէության էությունը սեր է, սեր...
Այն, որ քեզնից Քեզ անջատեց... Դ-ա սերն է:

Մարդ արարածն ինքնին հակված է իր ուռնահետքը թողնելու այս անցողիկ աշխարհում, ամենագոր ժամանակի հողովություն արժևորելու իր տեղն ու դերը: Երբ տարիների բեռի տակ կքած բանաստեղծը խորհրդածում է իր անցած ճանապարհի մասին, գրուցում ինքն իր հետ, ծնվում են խրատական բնույթի խորհրդածություններ՝ ուղղված ողջ մարդկությանը.

Ո՛չ, Խաղանի՛, քո վեհ հոգին դու մի՛ հանիր վաճառքի,
Զգու՛յշ, ստոր մարդկանց նման չձգտես դու սին փառքի.
Դու շախմատի թագուհու պես ծուղակ չընկնես, ո՛վ ուշիմ,
Լավ է զինվոր լինել, քան թե՛ սպարապետ մի գորքի:

Իբրև իսկական գեղագետ՝ Խաղանին պաշտամունք ունի կնոջ գեղեցկության հանդեպ՝ անկախ նրա ազգային պատկանելությունից ու դավանած կրոնից: Ահա մի չքնաղ գագեղ, ուր բանաստեղծը փառաբանում է քրիստոնյա գեղեցկուհուն և ինքն էլ ներկայանում է իբրև գեղեցկության բազմի առջև խոնարհվող մի հեթանոս, որն ուզում է գեղեցկուհի քրիստոնեուհու վարսերից իր համար հրապաշտի գոտի հյուսել: Երևի քրիստոնյա մորից է ժառանգել ակնածանքը քրիստոնյայի հանդեպ: Գուցե և չքնաղ հայուհին է մոռացնել տվել կրոնական ամեն արգելք ու խոչընդոտ: Իսկ նրա գեղեցկությունը պոետի տողերում շոշափելի, տեսանելի է դառնում ու հիացմունք առաջացնում.

Հիսուսաշուրթ գեղեցկուհի, սիրո ցավից մի՛ աղոթիր,
Խաչ ես տնկել այստեղ-այնտեղ, որ քեզ պաշտե ամեն ոգի.
Խաչանման քո հյուսքերից աղաչում եմ՝ տու՛ր ինձ մի մագ,
Որ աղոթքի համար շինեմ հրապաշտի կարմիր գոտի:

Հավանաբար, նման անկեղծ հիացմունքի խոսքերի պատճառով չարական մարդիկ դավեր սկսեցին լարել բանաստեղծի դեմ՝ դառնացնելով նրա հոգին: Խաքանին ստիպված է լինում թողնել Շիրվանը և ուխտագնացության մեկնել Սեբբա: Այդ ճամփորդությունն ավելի է

ընդլայնում բանաստեղծի աշխարհաճանաչողությունը, ավելի է հղկում նրա պոետիան: Հատկանշական է, որ այդ ճանապարհորդությունը առիթ դարձավ շրջելու տարբեր երկրներում, այդ թվում նաև Հայաստան աշխարհում: Այդ առիթով Խաղանին գրում է բանաստեղծությունների շարք, ուր հիացմունքով է խոսում հայ մարդու բարության ու հյուրասիրության մասին: Անկասկած, լավ ընդունելության արդյունքում են ստեղծվել մեծ բանաստեղծի այս տողերը.

Իմ Շիրվանից երբ որ եկա Հայոց հողը բարեբեր,
Ամեն մի հայ հիյուրասերի ու բարության խոսք ուներ:
Համոզվեցին, որ եկել են ուղիղ չորրորդ երկնքից,
Այնքան նուրբ էր հնչում ձայնս՝ իմ երգերի ակունքից:

Իմ երգերը անվանեցին քերթողական մի մեծ ծով,
Որտեղ նույնիսկ կխորտակվեր Վանա լիճը խորախոր:
Ո՛վ բարեկամ, մի՛ գարմանա, զի իմ երգը քաղցրաբառ
Վանա լճի դառը աղը կդարձնի գուտ շաքար:

Խաղանին անկեղծորեն սիրել է Հայաստանը, որի վեհանիստ լեռներն ամոքել են իր քնորբանից հեռացած փիլիսոփա բանաստեղծի դառնացած հոգու ցավը.

Իմ Թավրիզում եթե իրոք ունենայի ես հանգիստ,
Չէի գնա դեպի հայոց վեհ աշխարհը լեռնանիստ:

Հայրենիքից հեռացած վտարանդի պոետին ջերմացրել են գիր ու գրականության պաշտամունք ունեցող հայ մարդիկ և հարազատի ջերմությամբ պոետին հյուրընկալած Հայոց հողը: Եվ նա գրել է.

Միրոս տխուր ու միայնակ հասա Արաքս գետը խոր,
Նա էլ սրտիս արյան նման հոսում էր լու՛ռ, վշտածոր:
Բայց Արաքսը լավ հասկացավ իմ տանջանքը դառնագին,
Ողբահառաչ ձայնով կանչեց, ինձ անվանեց իր որդին:

Կասկածից վեր է, որ պարսից բանաստեղծ Խաղանիի սերը Հայաստան աշխարհի ու հայ ժողովրդի հանդեպ փոխադարձվել է նույնպիսի ջերմությամբ թե՛ իր ժամանակակիցների, թե՛ հետագա սերունդների կողմից: Խաղանիի փիլիսոփայական քառյակները թարգմանել ու հայ ընթերցողին է հանձնել նաև ամենայն հայոց բանաստեղծ Հովհաննես Թումանյանը, որին այնքա՛ն հոգեհարազատ են Խաղանիի խոհերը.

Հոգուդ հավքը հանկարծ թռավ՝ ի՞նչ ես դու,
Ճամփիդ կիսում ձիդ որ կորավ՝ ի՞նչ ես դու.
Եթե մարդ ես, կյանքդ փոխ է տրված քեզ,
Փոխ տրվողը որ ետ առավ՝ ի՞նչ ես դու:

Խաղանիի գողտրիկ քնարերգությունն իր բարձրարժեք թարգմանությամբ հայ ընթերցողի սեփականությունն է դարձել մեծամուն բանաստեղծ Վահագն Դավթյանը:

Սեր այս փոքրիկ անդրադարձը պարսից քնարերգության մեծերից մեկին՝ 12-րդ դարի բանաստեղծ Խաղանիին, կարելի է համարել այդ սիրո ու գնահատանքի արտահայտման մի համեստ փորձ:

*“Армянский” цикл
персидского поэта Хагани*

Великий немецкий писатель и мыслитель Гете, долгое время изучавший восточную и, в частности, персидскую поэзию, говорил о том, что многие персидские поэты, которых не принято считать великими, выше него как поэты.

Среди великих- живший XII в. Хагани, к творчеству которого мы обратились в той связи, что он посвятил армянам прекрасный цикл стихов.

Известно, что отец родившегося в 1120г. в г.Шамахи поэта был мусульманином, а мать –христианкой, возможно – армянкой.

В 25 лет Хагани был уже признан и любим. Эмоциональные, мелодичные стихи принесли ему славу.

Хагани обращается к извечным темам- любовь, тоска, разлука. Поэту, что характерно для восточного человека, уже в молодости свойственна тяга к размышлениям о том, что все преходяще, о смысле жизни, тайнах бытия. В стремительном течении жизни поэт ловит мгновенья совершенства и гармонии.

Будучи истинным эстетом, Хагани преклоняется перед женской красотой- независимо от национальной и религиозной принадлежности. Поэт воспевае красавицу-христианку, а себя представляет склоненным пред нею язычником, который хочет из влас христианки сплести пояс огнепоклонника. Наверное, от матери он унаследовал преклонение перед христианством. Возможно, из-за этого восхищения и началась его травля. Хагани вынужден покинуть Ширван и отправиться в паломничество в Мекку. Поэт скитае по многим странам, в том числе-Армении, пишет поэтический цикл, в котором восхищенно говорит о доброте и гостеприимстве армян, их преклонении перед письменностью и литературой.

Поэт искренне полюбил Армению, высокие горы которой врачевали душевную боль изгнанника, поэта-философа.

Несомненно, что любовь Хагани к Армении перешла и к современникам, и к потомкам.

Философские четверостишия Хагани переводил и великий армянский поэт Оганнес Туманян, которому были близки раздумья поэта.